ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ԱՆՈԹՆԵՐ՝ ՊԱՏՎԻ ԵՎ ՓԱՌՔԻ ՀԱՄԱՐ

Յոթերորդ հաղորդում

Ողորմության անոթներ՝ պատվի ու փառքի համար, ցորենի հատիկներ և որթի ճյուղեր

Գրվածքների ընթերցում. Հռմ 9:21, 23, Գրծ 9:15, Բ Կրթ 4:7, Հվհ 12:24, 15:1, 4-5, 7

I. Քրիստոսի հավատացյալները ողորմության անոթներ են՝ պատվի և փառքի համար. մենք Քրիստոսի՝ որպես ողորմության, պատվի և փառքի պարունակիչներն ենք՝ Հռմ 9:21, 23.

Ա. Մարդուն ստեղծելու առնչությամբ Աստծու մտահղացումը մարդուն Իր անոթը դարձնելն էր, Իր հողեղեն պարունակիչը, որպեսզի այն պարունակի Քրիստոսին՝ որպես կյանքի, և լցվի Քրիստոսով՝ որպես կյանքով, Քրիստոսի Մարմնի, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում, որպես Աստծու մեծ, ընդհանրական անոթի կառուցման համար, որ Աստծու արտահայտության համար է՝ Ծնդ 2:7, Գրծ 9:15, Հռմ 9:21, 23, Բ Կրթ 4:7, Բ Տմթ 2:20-21, Մտթ 25:2-4, 8-9, Ջք 4:11-14, հմմտ Հյտ 3:18:

Բ. Պողոսի բոլոր տասնչորս Թղթերը կարելի է ամփոփել երկու բառով՝ «բաց անոթ».

1. Թե որքանով Աստված կարող է Իրեն բաշխել մեր մեջ, կախված է մեր բաց լինելու աստիճանից. Աստված միայն ուզում է, որ մենք սիրենք Իրեն ու մեզ Իր համար բաց պահենք՝ Դ Թգ 4:1-7, Մտթ 5:3, Հվհ 1:16, Եսյ 57:15, 66:1-2:
2. Անկումայնությունը սկսվում է ինքնագոհությունից. առաջընթացը սկսվում է քաղցից ու ծարավից՝ Երկ Օր 4:25, Ղկս 1:53, Փլպ 1:25, Հյտ 3:16-18:

Գ. Մենք ստեղծվել ենք՝ լինելու ողորմության անոթներ, որպեսզի պարունակենք Քրիստոսին՝ որպես ողորմության Աստծու՝ Հռմ 9:11-13, 16, 20-21, 23, Ողբ 3:21-23, Ղկս 1:78-79.

1. Աստծու ողորմածությունն Աստծու հատկանիշներից ամենահեռահասն է, որը մեզ փրկում է մեր թշվառ վիճակից և բերում մի վիճակի, որը հարմար է Նրա սիրո և շնորհքի համար՝ Եփս 2:1-4, Եբր 4:16:
2. Աստծու ողորմությամբ մենք արձագանքեցինք ավետարանին, երբ ուրիշները չէին արձագանքում, ընդունեցինք Քրիստոսի՝ որպես կյանքի մասին խոսքը, երբ ուրիշները հրաժարվում էին այն ընդունելուց, և բռնեցինք Տիրոջ վերականգնման ճանապարհը, երբ ուրիշները հետ էին քաշվում այս ճանապարհն ընդունելուց՝ Օրհներգ 223, 3-րդ տուն:
3. Ողորմածությունը վերաբերում է Աստծու արտաքին գործողությանը, որը ձեռնարկվում է ի պատասխան մեր խղճալի վիճակի. կարեկցանքը վերաբերում է Նրա ներքին գորովալի զգացմունքին, որը սկիզբ է առնում Նրա սիրո էությունից՝ Հռմ 9:15, Մտթ 9:36:

4. Մենք պետք է ամեն առավոտ հպվենք Աստծուն՝ որպես Նրա. ով լի է կարեկցանքով, որպեսզի ապրենք թագավորության իրականության մեջ՝ ողորմած լինելով ուրիշների հանդեպ ու չդատելով ուրիշներին՝ Ողբ 3:21-23, Մտթ 5:7, 7:1:

Դ. Մենք ստեղծվել ենք՝ պատվի անոթներ լինելու, որպեսզի պարունակենք Քրիստոսին՝ որպես պատվի Աստծու. պատվի անոթները «պատվաստողներ» են՝ նրանք, ովքեր «պատվաստում են» եկեղեցու անկման դեմ՝ Բ Տմթ 2:20-22, Դտվ 9:9, Ա Թգ 2:30.

1. «Պատվաստողը» ուսուցիչ է՝ Քրիստոս Հիսուսի բարի սպասավոր, որը սնվում է կյանքի խոսքերով և վարժում իր հոգին, որպեսզի իր ամենօրյա կյանքում ապրի Քրիստոսին եկեղեցական կյանքի համար՝ Բ Տմթ 2:2, 1:13-14, Ա Տմթ 4:6-7, 6:20:
2. «Պատվաստողը» զինվոր է, որը պատերազմում է տարաձայնություններ առաջացնողների այլ ուսմունքների դեմ, որպեսզի իրականացնի Աստծու տնտեսությունը առաքյալի սպասավորության համաձայն և վարի մարտը մահվան՝ Աստծու վերջին թշնամու դեմ՝ լեցուն լինելով կյանքով՝ կյանքում թագավորելու համար՝ Բ Տմթ 2:3-4, Ա Տմթ 1:18, Հռմ 8:6, 11, 5:17:
3. «Պատվաստողը» մարզիկ է, որն ապրում է նորմալ եկեղեցական կյանքով՝ փախչելով Քրիստոսի՝ որպես իր ապաստանի մեջ և ձգտելով Քրիստոսին՝ որպես արդարության, հավատքի, սիրո և խաղաղության, նրանց հետ, ովքեր կանչում են Տիրոջը մաքուր սրտից՝ Բ Տմթ 2:5, Եբր 6:18-20, Բ Տմթ 2:22:
4. «Պատվաստողը» հողագործ է, որն աշխատում է Աստծու հետ միասին համապիտանի կյանքի շնորհիվ՝ մարդկանց մեջ կյանքի սերմը սերմանելով ու նրանց ջրելով կյանքի Հոգով Նրա առողջ խոսքերի միջոցով՝ խ. 6, Ա Կրք 3:6, 9, Բ Կրք 6:1ա, Ղկս 8:11, Հվի 7:38, 6:63, Բ Կրք 3:6:
5. «Պատվաստողը» մշակ է, որն ուղիղ կտրում է ճշմարտության խոսքը, Աստծու խոսքի տարբեր մասերը ճիշտ և ուղիղ կերպով բացահայտում՝ առանց խեղաթյուրելու (ինչպես ատաղձագործության մեջ). անհրաժեշտ է ճիշտ կերպով բացված ճշմարտության խոսքը, որը խավարում եղող մարդկանց կլուսավորի, թույնի դեմ «կպատվաստի», մահը կկլանի և շեղվածներին կվերադարձնի պատշաճ ուղու վրա՝ Բ Տմթ 2:15, հմմտ Գրծ 26:18, Սղմ 119:130, 133:

Ե. Մենք փառքի անոթներ ենք, որոնք պարունակում են Քրիստոսին՝ որպես փառքի Աստծու.

1. Փառքն Աստված Ինքն է՝ արտահայտված և հայտնի դարձված՝ Երմ 2:11, Գրծ 7:2, Եփս 1:17, Ա Կրք 2:8, Ա Պտ 4:14, Կղս 2:9:
2. Մենք պարունակում ենք այս գանձը՝ Քրիստոսին՝ որպես փառքի Աստծու, որը բնակվում է մեր՝ հողե անոթներիս ներսում (Բ Կրք 4:7). «այս գանձը», որը բնակվում է մեր մեջ, «Հիսուս Քրիստոսի երես»-ն է (խ. 6)՝ Քրիստոսի ներկայությունը, «Քրիստոսի անձ»-ը (2:10):

3. Երբ մեր սիրտը Տիրոջն ենք դարձնում, հայում ենք Տեր Հոգուն՝ որպես մեր հոգում եղող Քրիստոսի ներկայության, և «նույն պատկերին ենք փոխակերպվում փառքից փառք, ինչպես որ Տեր Հոգուց»՝ 3:16-18:
4. Տիրոջ փառքին հայել նշանակում է Տիրոջն անձամբ տեսնել, Տիրոջ փառքն անդրադարձնել նշանակում է ուրիշներին մեր միջոցով Նրան տեսնել տալ՝ Եսյ 60:1, 5:

II. Քրիստոսի հավատացյալները ցորենի հատիկներ են՝ Հվի 12:24.

Ա. Քրիստոսի մահվան ու հարության միջոցով առաջացած ցորենի բազում հատիկները մեկ հացի՝ Քրիստոսի Մարմնի ձևավորման համար են. ցորենի հատիկները փշրվում են, ձուլվում են յուղի հետ, թխվում ջեռոցում և միախառնվում որպես մեկ շոթ, ինչը խորհրդապատկերված է հացի ընծայով՝ Ա Կրթ 10:17, Ղտց 2:4-5:

Բ. Տերը՝ որպես հողի մեջ ընկած ցորենի հատիկ, մահվան մեջ կորցրեց Իր շունչ-կյանքը, որպեսզի ազատագրեր Իր հավիտենական կյանքի կրակը «բազում հատիկների» համար հարության մեջ. մենք՝ որպես բազում հատիկներ, պետք է մահվան միջոցով կորցնենք մեր շունչ-կյանքը, որպեսզի վայելենք ու ազատագրենք հավիտենական կյանքի կրակը հարության մեջ եղող ուրիշների համար՝ Հվի 12:24-26, Ղկս 12:49-50, Ա Կրթ 15:31, 36, Բ Կրթ 4:12:

Գ. Քանի որ մենք ցորենի հատիկներ ենք, որոնք հողի մեջ են ընկել, որպեսզի մեռնեն, մեր արտաքին մարդը ջախջախվում, սպառվում է, որպեսզի մեր ներքին մարդն օրեցօր նորոգվի՝ խխ. 16, 10-11, Տտս 3:5, Եփս 4:23, 5:26:

Դ. Քրիստոնյան, որը հոգևոր է Քրիստոսի Մարմնի կառուցման համար, պետք է ամեն օր երեք բան «կարդա». նա պետք է կարդա Աստվածաշունչը, պետք է «կարդա» իր ներքին զգացումը և պետք է «կարդա» իր միջավայրն ու հանգամանքները, այսինքն՝ իր շուրջը եղող մարդկանց, բաները և գործերը՝ Հռմ 8:6, հմմտ Առկ 16:9:

Ե. Մենք, հնարավոր է, աղոթում ենք և հուսացած ենք, որ մյուսները կփոխվեն, բայց որքան շատ ենք այսկերպ աղոթում, այնքան մեզ համար պարզ է դառնում, որ ոչինչ չի փոխվելու. սա այն միջավայրն է, որն Աստված ստեղծել է, որպեսզի մեզ կերպարանակցվել տա Աստծու Որդու պատկերին և դրսևորի Աստծու շնորհքն ու զորությունը՝ Հռմ 8:28-29, հմմտ 6:3-4, Գ Թգ 7:17, 20-22:

Զ. Մենք պետք է համագործակցենք գործող Հոգու հետ և ընդունենք այն միջավայրը, որն Աստված դասավորել է մեզ համար՝ Փլպ 4:12, Եփս 3:1, 4:1, 6:20, Ա Կրթ 7:24:

Է. Մենք, հնարավոր է, գանգատվում ենք Աստծուն, բայց մեր գանգատվելը գուցե լավագույն աղոթքն է՝ Աստծու համար ամենահաճելի աղոթքը. մինչ մենք գանգատվում ենք, Աստված ուրախանում է, որովհետև Նա բոլոր բաներին միասին աշխատել է տալիս մեր բարիքի համար, որպեսզի մենք կերպարանակից լինենք Իր անդրանիկ Որդու պատկերին՝ հմմտ Սղմ 102, վերնագիր:

III. Քրիստոսի հավատացյալները որթի ճյուղեր են՝ Հվի 15:1, 4-5.

Ա. Որթը, այսինքն՝ Քրիստոսը, իր ճյուղերով, այսինքն՝ Քրիստոսի հավատացյալներով հանդերձ, Եռամեկ Աստծու օրգանիզմն է Աստծու տնտեսությունում, որն աճում է Նրա հարստությամբ և արտահայտում է Նրա աստվածային կյանքը՝ խխ. 1-5:

Բ. Մենք ոչինչ ենք, ոչինչ չունենք և ոչինչ չենք կարող անել առանց Քրիստոսի՝ որպես որթի, ուստի մենք պետք է Նրա մեջ հարակայենք՝ Նրա մեջ մնանք, գտնվենք ու բնակվենք՝ ապրելով ոչ թե այն բանի շնորհիվ, ինչ մենք ենք կամ կարող ենք անել, այլ անմահ կյանքի, որը Քրիստոսն Ինքն է՝ 14:6ա, Բ Կրթ 5:4:

Գ. Քրիստոսի մեջ հարակայել նշանակում է Նրա սիրո մեջ հարակայել, որպեսզի մենք սիրենք Նրան և սիրենք միմյանց՝ պտղաբերության մեջ աստվածային կյանքն արտահայտելու նպատակով՝ Հվի 15:9-10, 16-17.

1. «Նոր պատվիրան եմ ձեզ տալիս. որ սիրեք միմյանց. ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ սիրեք միմյանց: Բոլորը սրանով կիմանան, որ դուք Իմ աշակերտներն եք, եթե միմյանց հանդեպ սեր ունենաք»՝13:34-35, հմմտ Ա Հվի 4:18-19:
2. Եթե սիրենք Տիրոջը, կլցվենք Նրանով, և այն, ինչ լցնի մեզ ներքուստ, կելնի մեզնից. Տիրոջը սիրելը մեզ ծայրաստիճան որակավորում, կատարելագործում ու զինում է, որպեսզի բարբառենք Տիրոջը՝ Հվի 21:15-17:

Դ. Քրիստոսի մեջ հարակայել նշանակում է ամեն օր ու ամեն ժամ մեզ պահել Նրա հետ հաղորդակցության մեջ՝ ոչնչի թույլ չտալով կանգնել մեր ու Նրա միջև. ողջ եկեղեցական կյանքը կախված է աստվածային հաղորդակցությունից, այսինքն՝ շրջանառող Եռամեկ Աստծուց, ով աշխատում, հոսում, հաղորդում, տեղափոխում, փոխանցում և բաշխում է այն ամենը, ինչ Ինքն է, մեր մեջ մեր վայելքի համար՝ Ա Հվի 1:3, Բ Կրթ 13:14:

Ե. Որպեսզի Տերը հարակայի մեր մեջ, մենք պետք է թույլ տանք, որ Նրա խոսքերը հարակայեն մեր մեջ. եթե հարակայենք Նրա գրված խոսքի մեջ՝ գալով Նրա մոտ կյանքի համար, Նրա ակնթարթային խոսքերը կհարակայեն մեր մեջ՝ որպես հոգի ու կյանք՝ Հվի 15:7, 5:39-40, 8:31, 6:63:

Զ. Որպես Քրիստոսի՝ ճշմարիտ որթի ճյուղեր՝ մենք պետք է Քրիստոսին ապրենք, Քրիստոսին աճեցնենք, Քրիստոսին արտահայտենք ու Քրիստոսին տարածենք ամեն առումով. սա նշանակում է «Տիրոջն արժանի կերպով քայլե[լ]՝ ամեն բանում Նրան հաճեցնելու համար, ամեն բարի գործում պտղաբերելով և Աստծու լիակատար գիտությամբ աճելով»՝ Կղս 1:10:

Է. Պտղաբերությունը ներքին կյանքի հարստության հորդելն է. ներքին կյանքի այս առատությունից կառաջանա հոսք, որը կհասնի ուրիշներին՝ թափանցելով նրանց կյանքի մեջ, որպեսզի նրանք մնայուն պտուղ դառնան Հոր փառավորման համար՝ Հվի 15:16:

© 2026 Living Stream Ministry